600.0299.02.11.16

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

2 նոյեմբերի 2016 թվականի №299Ա
ք.Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 2-Ի №77Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 1-ին կետը, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասը, Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2013 թվականի նոյեմբերի 1-ի №374Ն որոշմամբ հաստատված՝ էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգը և հաշվի առնելով «Հ.Ա.Գ. ԵՌՅԱԿ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2016 թվականի հոկտեմբերի 4-ի №01/22-14-07 և հոկտեմբերի 25-ի №01/22-14-9 գրությունները՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում** է.

1. Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2011 թվականի մարտի 2-ի «Հ.Ա.Գ. ԵՌՅԱԿ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը «Ոսկեպար» փոքր հիդրոէլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա տրամադրելու մասին» №77Ա որոշման՝

   1) 1-ին կետում «Ոսկեպար գետի վրա կառուցված ջրանցքի» բառերը փոխարինել «Ոսկեպար գետի Ոսկեպար-Բաղանիս-Ոսկեվան-Կոթի» ինքնահոս ջրագծի» բառերով,

   2) 2-րդ կետով հաստատված «Հ.Ա.Գ. ԵՌՅԱԿ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության «Ոսկեպար» փոքր հիդրոէլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության №0393 լիցենզիայի պայմանների՝

ա. 3-րդ կետի 1-ին ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1) 2016 թվականի հունվարի 20-ից մինչև 2016 թվականի նոյեմբերի 2-ը վերակառուցման ժամանակահատվածն է,».

բ. 5-րդ, 6-րդ և 9-րդ կետերը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«5. Լիցենզավորված գործունեության աշխարհագրական տարածքը Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Ոսկեպար համայնքի վարչական տարածքն է՝ Ոսկեպար գետի «Ոսկեպար-Բաղանիս-Ոսկեվան-Կոթի» ինքնահոս ջրագծի վրա (ոռոգման համակարգ):».

«6. Լիցենզավորված անձին իրավունք է տրվում և պարտավորեցվում է Լիցենզիայով ամրագրված վերակառուցման ժամանակահատվածի ավարտից հետո 1569 կՎտ հաշվարկային հզորությամբ «Ոսկեպար» փոքր հիդրոէլեկտրակայանում արտադրել էլեկտրական էներգիա (հզորություն) ու այն վաճառել Շուկայի կանոններով:».

«9. ««Ոսկեպար» փոքր հիդրոէլեկտրակայանի փաստացի տեղակայված հզորությունը 1570 կՎտ է, իսկ էլեկտրական էներգիայի արտադրության գործունեությունն իրականացվում է հետևյալ սարքավորումներով՝

1) հիդրոտուրբին №1՝ ՇՇ300-h4-40, 770 կՎտ, 2016թ,

2) գեներատոր №1՝ ԱԳՍ 800.400.50.S2, 800 կՎտ, 2016թ,

3) հիդրոտուրբին №2՝ Р-870/430, 800 կՎտ, 2012թ,

4) գեներատոր №2՝ СГ2-800, 800 կՎտ, 1991թ:»:

2. «ԻՆԵԿՈԲԱՆԿ» փակ բաժնետիրական ընկերությանն ազատել 2015 թվականի դեկտեմբերի 22-ի №6672 գրությամբ ներկայացված №EA15/00168 բանկային երաշխիքի համաձայն Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի առջև «Ոսկեպար» փոքր հիդրոէլեկտրակայանի վերակառուցման համար ստանձնած մեկ միլիոն ինը հարյուր ութսուն հազար դրամ երաշխիքային պարտավորությունից:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ռ. ՆԱԶԱՐՅԱՆ

ք. Երևան
2 նոյեմբերի 2016թ.
ժամը 16[00]